

ԵՐԳ ԳԻՇԵՐՈՒԹԻԱՅ. ՄԻՐՈՅ ԵՒ ԼՈՒՍՆԱԿԻ

Գիշերը հով, գիշերը զով,
Դիւրանիք ու երգ մեր սրտում,
Եւ անվրդով երլինեցը՝ ծով,
Լուսնակն էր լուռ նաւորդում...:

Դիւրանիք ու սէր, երբ լուսնակն էր
Անդուլ նայում մեր վըրայ.
Մենիք անվաներ՝ մի մուր քստուեր...
Միայն ծառեր մեզ վըկայ:

X

Գիշերը հով, գիշերը զով,
Դիւրանիք ու երգ մեր սրտում.
Եւ անվրդով երլինեցը՝ ծով,
Լուսնակն էր լուռ նաւորդում:

■

Բացուել է գիրքն անցած օրերի,
Խմ առջեւ, այս գիշեր,
Օրերի խոր սիրով ապրըւած,
Տիր սակայն շատ սակաւ կը յիշեմ:

X

Միքէ՞՞ զուր է եղել այնքան վիշտ,
Սէր ու յայս իմ սրտում,
Խնչքան շուտ է անցնում ամէն ինչ,
Օրերի փոշեպատ այս գրքում:

X

Եւ բոլորն անցել են սրպէս հով.
Մընացել են միայն,
Անցեալի զերդ ըստուերն անվրդով.
Ճին յայգեր, եւ՛ տարտառ եւ՛ ունայն:

X

Միքէ՞՞ զուր է վառուել արեգակն,
Եւ արիւնն իմ սրտում...
Տիր կեանէից մընաց լոկ յիշաւակ,
Եւ փոշի եւ մըշուշ այս գրքում:

X

Մի նո՞ր կեանք, նոր արեւ, նոր աշխարհ,
Նիւս' ու է դեռ հազին,
Լուսեղէն էւրիւն, լուսուսարք
Քարանձաւ եւ ովկեան մասուսին....:



Ո Ւ Ր Ե Ն Ի Ն

Անտառի մեջ առուի ափին,
 Պերճ ուռենին կորաքամակ,
 Ճօնում է հեզ հովի շափին,
 Տիրութիւն ու բախիծ համակ,
 Ու վար կախած նիւղերն դաղար՝
 Արտասաւում է, անձայն լալիս.
 Նըսում է սիւզը միալար,
 Ու տերեւներն ծափ են տալիս
 Խսկ առուակը մեզմ, անդադար,
 Մրմբնչում է՝ մի՛ լա՛ր, մի՛ լա՛ր

×

Հին անտառում՝ ծառի տակին,
 Խազում է ջուրն, բըխում յաւետ,
 Նստած եմ լուս առուի տակին,
 Կորած նայուածքն հոսանքի հետ,
 Սակայն յոյզեր, տարտամ, տրտո՞ւմ,
 Հին վերեներ են բացել սրտումս
 «Ռուենու պէս պերն ու դալար
 Կար մի էակ», բայց անդադար
 Առաւակը մեզմ ու միալար
 Մրմբնչում է՝ մի՛ լար, մի՛ լար :

Փարիզ 1938

8. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ